Տիգրան Եփրեմյան

ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՍՈՑԻԱԼ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԵՎՈՒՅԹ ԵՎ ՄԻԱՎՈՐ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Բանալի բառեր - Եվրոպա, Վեստֆալյան խաղաղություն, պատերազմ, Ֆրանսիական հեղափոխություն, ազգային ինքնիշխանություն, ազգ-պետություն, ինքնորոշում:

15-16-րդ դարերում Եվրոպայում մեկնարկում է հասարակական-պատմական նոր միավորի՝ ազգային պետության ձևավորման գործընթացը՝ կապված ինչպես ֆեոդալական հարաբերությունների անկման, այնպես էլ ազգային բուրժուազիայի կայացման հետ[1]: Մինչև Վեստֆալյան համակարգի՝ պետությունների միջազգային համակարգի հաստատումը, Եվրոպայի պատմությունը հիմնականում քաղաքների, կայսրությունների կամ եկեղեցական տիրապետության ու հակամարտության պատմություն էր: Պետությունների կողմից ռազմական ուժի մենաշնորհումը և բյուրոկրատական համակարգի կայացումը կենտրոնական նշանակություն ունեցան ազգաշինության գործընթացում[2]: Սկսվեց տարածքների միավորումը միասնական վարչական կենտորնների շուրջը և պետական սահմանների հստակ ընդգծումը: Պետական իշխանությունները ձգտում էին նաև ձևավորել միատարր ազգային բնակչություն՝ օգտագործելով ինչպես բանակը, ոստիկանությունը, այնպես էլ կրթությունը, կրոնը և սոցիալական քաղաքականության այլ միջոցներ[3]: Աստիճանաբար միապետական խորհրդանիշերը պահպանող պետությունները ազգային ինքնիշխանության երևույթի զարգացմանը զուգահեռ փոխակերպվում են ազգային պետությունների[4]:

15-16-րդ դարերը աչքի ընկան եվրոպական պետությունների քաղաքական և ռազմական իշխանությունների կենտրոնացմամբ միապետների կամ կենտրոնական կառավարության ներքո: Այս գործընթացը զուգորդվում էր հարկային վարչարարության խստացմամբ, որն իրականացվում էր կատարելագործված բյուրոկրատական ապարատի միջոցով[5]: Այս կերպ տնտեսական փոփոխությունները հանգեցնում էին ֆեոդալական հարաբերությունների քայքայմանը, և տարբեր ընկերային խմբեր սկսում էին հարաբերվել դաշինքների և պարտավորությունների ավելի նոր կերպերով: Ռեֆորմացիայի հետևանքով և 1555 թ. Աուգսբուրգի հաշտության

---

[1] Տե՛ս Кортунов С. В., Крушение Вестфальской системы международных отношений и становление нового мирового порядка. В кн.: Мировая политика. Москва: Изд. дом ГУ-ВШЭ, 2007, с. 75–117:

[2] Տե՛ս Kennedy P., The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000, London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, p. 75:

[3] Տե՛ս Калхун К., Национализм, пер. А. Смирнова. М.: Издательский дом «Территория будущего», 2006. С. 139-141:

[4] Տե՛ս Tilly Ch., Coercion, Capital, and European States, AD 990–1990, Cambridge, MA: Basil Blackwell, 1990, pp. 91-93:

[5] Տե՛ս Tilly Ch., op. cit., p. 75:

պայմանագրով քրիստոնեական աշխարհը բաժանվեց «cuius regio, eius religio» («ում տարածքը, նրա հավատքը») սկզբունքով, այն է՝ կրոնը պետք է ենթարկվեր ինքնիշխան տիրակալի տարածքային վերահսկողությանը: Այս հանգամանքը միավորեց քաղաքական և հոգևոր իշխանությունները՝ աշխարհիկությունը (secularism) տարածելով պետական հիմքի վրա: Լատիներենի կիրառման նվազումը և պետական գործիչների, մտավորականների ու հոգևորականների կողմից ազգային լեզուների օգտագործման աճը ընդգծեց աշխարհիկ այս միտումը: Ժամանակի մտավորականները ազգային պետության գաղափարը սկսեցին դիտարկել իբրև բնական և քաղաքացիական հասարակության կազմակերպման լավագույն կերպ, որը կոչված է պաշտպանելու ընդհանուր ազգային շահերը: Ընկերային միտումներից և իմաստասիրական դատողություններից զատ «ազգաշինության» գործընթացի ամենաառաջնային խթանը պատերազմներն էին: Ռազմական և աշխարհաքաղաքական գործոնները նպաստեցին պետությունների տարածքային ու ազգային սահմանների ձևավորմանը[1]: Չարլզ Թիլիի հայտնի բնորոշմամբ՝ «պատերազմը ստեղծեց պետություններին և ընդհակառակը»[2]:

Արդի պետությունների ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ նաև աշխարհաքաղաքական մրցակցությունը. պատերազմ, ռազմատեխնոլոգիական և հաստատութենական նորարարություններ, ծախսերի ավելացում, հանրային ռեսուրսների արդյունավետ արդյունահանման աճող պահանջարկ, նոր տեսակի մաքսեր, հարկեր և հանրային ֆինանսներ, բյուրոկրատականացում, պետական կառավարման կենտրոնացում ու ռացիոնալացում, հարկադրանքի միջոցների պետական մենաշնորհում և արդի ինքնիշխանություն[3]:

17-րդ դարի առաջին կեսի հիմնարար փոփոխություններից էր մշտական կամ ազգային պրոֆեսիոնալ բանակների կայացումը, ինչը ևս սերտորեն կապված էր բացարձակ միապետության բարեշրջման և արդի պետության զարգացման հետ, որի ամենահզոր զենքը դարձավ հենց սեփական բնակչության կազմից զորակոչվող մշտական բանակը[4]: Ըստ այդմ, վարձու բանակերին փոխարինեցին պրոֆեսիոնալ զինվորներով մշտական ազգային բանակները, կամ առնվազն ազգային հիմքով բանակները, որոնք համապատասխանում էին կենտրոնացված պետական կառավարման պահանջներին[5]: Ինչպես Փոլ Քենեդին է նշում, «Ռազմական ճիգերը ոչ միշտ են բխել ազգ-պետությունների «գոյության շահերից» (raison d'être), սակայն դրանք, անկասկած, եղել են նրանց կայացմանը միտված ամենաթանկարժեք և խթանող գործունեությունը»[6]:

17-րդ դարի կեսերին ֆեոդալական միավորների ինքնիշխանության փոխանցումը կենտրոնական թագավորական մարմիններին նպաստեց պետությունների

---

[1] Տե՛ս Kennedy P., op. cit., p. 70:
[2] Tilly Ch., op. cit., pp. 67-90.
[3] Տե՛ս Asbach O. and Schröder P. (ed.), War, the State, and International Law in Seventeenth-Century Europe, Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, p. 42:
[4] Տե՛ս Cooper J. P. (ed.), The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59, The New Cambridge Modern History Volume IV, Cambridge: Cambridge University Press, 1970, p. 202:
[5] Տե՛ս Cooper J. P. (ed.), op. cit., p. 224:
[6] Kennedy P., op. cit., p. 71.

ներքին տարածքային համախմբմանը: Քաղաքական իշխանության կուտակման այս գործընթացը հանգեցրեց անձնավորված ինքնիշխանության, որն իր ձևակերպումը գտավ «Արև-արքա» (le Roi-Soleil) Լուի 14-րդի «Պետությունը ես եմ» (L'État, c'est moi) արտահայտության մեջ: Այսպիսի ընկերային ռեժիմի համատեքստում հանրային և մասնավոր, տնտեսական ու քաղաքական ոլորտների բաժանում չկար, քանզի արքան այդ ամենը դիտարկում էր իբրև իր ժառանգական սեփականություն, և պետական շահ (raison d'État) նշանակում էր թագավորի շահ (raison de roi)[1]: Այս առումով հետաքրքրական է իտալական Վերածնունդի (Risorgimento) քաղաքական ոգեշնչողներից Ջուզեպպե Մաձինիի (1805-1872 թթ.) դիտարկումը. «Դինաստիական ազգայնականությունը հիմնված էր մեր ընթացիկ համոզմունքների բացարձակ ժխտման վրա: Այստեղ չկար առաջընթացի հղացք. քաղաքական վարդապետությունները պարզապես տեսականացնում էին ազգերի շրջանաձև շարժումն ու հնազանդեցումը և ժամանակի հոսքը: Մտածողները այն ժամանակ տեղյակ չէին բարոյական իրավունքի գաղափարին... Թագավորները դիտվում էին որպես միջնորդներ Աստծո և հպատակների միջև, իսկ օրենքը պարզապես իրենց իրավարար կամքի արտահայտությունն էր... Ժամանակաշրջանի մտածողների մեծամասնության համար «ժողովուրդ»-ը ոչ այլ ինչ էր, քան մարդկանց հավաքածու, որ ծնված են ծառայելու և աճեցնելու ազնվականության և միապետության շքեղությունը: Երբ Լուի 14-րդն ասաց «պետությունը ես եմ», նա ամփոփեց այդ կարգի քաղաքական վարդապետությունը: Ըստ այդմ, «ազգը» փոփոխական չափերով թույլ սահմանված տարածք էր, որը կարող էր շատ հեշտությամբ մասնատվել կամ ընդլայնվել, այդ թվում և թագավորական ամուսնությունների ու կանանց իրավահաջորդության միջոցով: Ավելի հաճախ «ազգերը» ստեղծվում էին նվաճումով և պահվում ուժով»[2]: Այսպիսով, «Արև-արքա»-ն գտնվում էր համակարգի կենտրոնում և հանդիսանում էր ինքնիշխանության ակունքը: 1789 թ. ֆրանսիական հեղափոխությամբ ինքնիշխանության ակունք հռչակվեց ազգը: Հատկանշական է՝ երբ 1797 թ. հոկտեմբերին Կամպո-ֆորմիոյի բանակցությունների ժամանակ ավստրիական կողմը իբրև զիջում առաջարկեց ճանաչել Ֆրանսիական Հանրապետությունը, Նապոլեոն Բոնապարտը հակադարձեց. «Արևը ճանաչման կարիք չունի» ("Le soleil n'a pas besoin d'être reconnu.")[3]՝ այս կերպ նշանավորելով ազգերի ինքնորոշման և ազգային ինքնիշխանության գաղափարների մուտքը եվրոպական քաղաքականություն:

Եվրոպայի ազգ-պետությունները, այդ թվում՝ Ֆրանսիան, Անգլիան, Շվեդիան, Նիդեռլանդները, Իսպանիան, Պորտուգալիան և այլն, սկսեցին ձևավորվել արդեն 1648 թ. Վեստֆալի պայմանագրով ավարտուն տեսք ստացած տարածքային պե-

---

[1] Տե՛ս Asbach O. and Schröder P. (ed.), op. cit., p. 50:

[2] Mazzini G., A Cosmopolitanism of Nations: Giuseppe Mazzini's Writings on Democracy, Nation Building, and International Relations (1805–1872), edited and with an introduction by Stefano Recchia and Nadia Urbinati; translations by Stefano Recchia, Princeton and Oxford: Princeton University Press, 2009, p. 64.

[3] Տե՛ս Nothomb J.-B., Traité de paix entre la Belgique et la Hollande du 23 janvier 1839: discours prononcé dans la séance de la chambre des représentans du 4 mars, Bruxelles: Chez Deltombe Imprimeur, 1839, p. 44:

տությունների ներսում: «Ուշացածները»՝ առաջին հերթին գերմանական և իտալական ազգերը, անցան զարգացման այլ ճանապարհ, ինչը բնորոշ էր նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ազգային պետությունների ձևավորմանը, որտեղ ազգային պետությունների ձևավորմանը նախորդում էր ազգային ինքնագիտակցության և ազգային գաղափարաբանության քարոզչությունը[1]: Ի մասնավորի, Իտալիայում հայրենասիրական տրամադրությունները սկսեցին տարածվել Նապոլեոնի կառավարման շրջանում (1805-1814 թթ.), երբ Իտալիայի մեծ մասը քաղաքականպես միավորվել էր[2]:

«Ազգային պետություն» հասկացությունը ձևավորող երկու այս բաղադրիչները՝ «ազգ» և «պետություն», պատմականորեն զուգահեռ չեն զարգացել: Պետությունը և ազգը միաձուլվել են ազգային պետության մեջ միայն 18-րդ դարի վերջի ամերիկյան և ֆրանսիական հեղափոխություններից հետո[3]: Եվրոպայում ազգ[4] հասկացությունը (ժամանակակից իմաստով) զարգացել է ժառանգական բացարձակ միապետության պայմաններում: Այսպիսի պետությունը ներկայանում էր իբրև միապետի սեփականություն: Ունենալով իր յուրահատկությունները եվրոպական տարբեր պետություններում՝ ժառանգական բացարձակ միապետությունը քաղաքական կառույց էր, որն անհրաժեշտ էր ֆեոդալական հասարակական և արտադրական հարաբերությունների կառավարման համար: 16-րդ դարում՝ Ռեֆորմացիայի բուռն շրջանում, ժառանգական միապետությունը դեռ հանդես էր գալիս խաղաղության և սոցիալական կապերի ամրության երաշխավոր[5]:

Բացարձակ միապետության համար կարևոր պայման էր ինքնիշխանությունը, որը չէր ճանաչում որևէ գերիշխանություն: Սակայն եվրոպական ինքնիշխան պետությունները՝ թագավորները կամ հանրապետությունները, ստիպված էին դիմակայելու Հռոմի Պապի և Սրբազան հռոմեական կայսեր հավակնություններին: Ինքնիշխան հասկացությունը, իբրև Աստծո անմիջական շնորհ, բնորոշ էր բացարձակ միապետության հաստատությանը ողջ Եվրոպայում: Ռուսական բացարձակ միապետությունը ուներ իր դրսևորման առանձնահատկությունները: Այն է՝ պետությունը առանձնացվում էր ինքնիշխանի անձից: Ռուսական կողմը հայտարարում էր, որ իրենք «միակ ուղղափառ քրիստոնյաներն են, Մոսկվան երրորդ և վերջին Հռոմն է, ցարը՝ միակ քրիստոնյա կայսրը»: Նա Աստծուց բացի որևէ գերիշխանություն չէր ճանաչում և ինքնակալ էր. «Աստված օրհնել է ցարին և տվել է Արևել-

---

[1] Տե՛ս Хабермас Ю., Вовлечение другого. Очерки политической теории. Пер. с немецкого Ю. С. Медведева, под ред. Д. В. Скляднева - СПб.: Наука, 2001, с. 197:

[2] Տե՛ս Mazzini G., op. cit., p. 3:

[3] Տե՛ս Хабермас Ю., указ. соч., с. 201-203:

[4] «Համաձայն դասական հռոմեական իմաստի “natio” (լատ. ազգ) հասկացությունը “gens” (ցեղ) հասկացության նման հակադրվում էր “civitas” (պետություն) հասկացությանը: «Ազգերը» հանրույթներ էին՝ կապված ամենից առաջ ծագմամբ, աշխարհագրորեն, մշակույթով, ընդհանուր լեզվով, բարքերով ու ավանդույթներով, բայց դեռ ոչ քաղաքականապես: Միջին դարերում և Նոր ժամանակների սկզբում այս իմաստը դեռ պահպանվում էր ամենուր, որտեղ “natio”-ն նույնացվում էր “lingua”-ի՝ լեզվի հետ»: Տե՛ս Хабермас Ю., указ. соч., с. 204:

[5] Տե՛ս Хардт М., Негри А., Империя, Пер. с англ., под ред. Г. В. Каменской, М. С. Фетисова. — М.: Праксис, 2004, сс. 97-98:

քում, Արևմուտքում, Հարավում և Հյուսիսում ժողովրդին կառավարելու և ազնվորեն դատելու իրավունք»[1]:

Ազգ-պետությունների տվյալ համակարգը ձևավորվեց միայն 18-19-րդ դարերում, որի կայացման համար առանցքային նշանակություն ունեցավ հին կարգերի (ancien régime) հաղթահարումը Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և այն պետություններում, որտեղ աստիճանաբար ավելի գերիշխող էր դառնում արդյունաբերական հասարակությունը[2]: Կապիտալի նախնական կուտակման գործընթացները նոր պայմաններ ստեղծեցին իշխանության բոլոր կառույցների համար: Միապետի իշխանության ֆեոդալական հիմքերը քայքայվում էին: Սակայն մինչև բուրժուական երեք մեծ հեղափոխությունների՝ անգլիական, ամերիկյան ու ֆրանսիական, ժամանակաշրջանը չկար որևէ քաղաքական այլընտրանք այս մոդելին: Անգլիայում 1688 թ. «Փառահեղ հեղափոխությամբ» պառլամենտը դարձավ ինքնիշխանության կրող, իսկ Ֆրանսիայում 1789 թ. հեղափոխությամբ ինքնիշխանության ակունք հռչակվեց ազգը [3]:

Աբսոլյուտիզմը բարոյապես մաշվել էր: Նոր կարգի հաստատման հեղափոխական ալիքը հասունացել էր հատկապես Ֆրանսիայում, որտեղ պետական գաղափարախոսության և մտավորականության միջև անջրպետը ամենալայնն էր[4]: Բացարձակ միապետական ժառանգական մոդելը այս ընթացքում պահպանվում էր շնորհիվ միայն քաղաքական ուժերի հատուկ փոխզիջման: Ազգային ինքնագիտակցության բարձրացման ազդեցությամբ հետզհետե ձևավորեց այն մշակութային իրավիճակը, որում հպատակները կարող էին դառնալ քաղաքականապես ակտիվ քաղաքացիներ: Ժառանգական բացարձակ միապետությունը ազգային պետության փոխակերպմանը զուգընթաց հպատակը (subjectus) իր տեղը զիջեց քաղաքացուն (cives): Քաղաքական կարգը կայունացվեց և ամրացվեց ազգային ինքնությամբ՝ մշակույթով, էթնիկ հատկանիշով, հավաքական հիշողությամբ և տարածքային ու լեզվական ընդհանրությամբ[5]: Ինչպես Բենեդիկտ Անդերսոնն է նշում, «Ազգը երևակայական քաղաքական համայնք է, և երևակայված է իբրև ըստ էության սահմանափակ և ինքնիշխան… Այն երևակայված է իբրև համայնք, քանզի չնայած գործնական անհավասարությանը, ազգը միշտ ընկալվում է որպես խոր և հորիզոնական ընկերություն»[6]: Իսկ Ջուզեպպե Մաձինին ազգը բնորոշում է էապես քաղաքական իմաստով, իբրև հանուն ընդհանուր բարիքի համագործակցության միջավայր (commonwealth)[7]: Մասնավորապես նա գրում է. «Հավասարություն, ազատություն, ընկերակցություն (Association). միայն այս երեք

---

[1] Cooper J. P. (ed.), op. cit., p. 113.

[2] Տե՛ս Moita L., A Critical Review on the Consensus around the Westphalian System. JANUS.NET e-journal of International Relations, Vol. 3, N.º 2, fall 2012, p. 38:

[3] Տե՛ս Teschke B., The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations, London - New York: Verso, 2003, p. 253:

[4] Տե՛ս Treasure G., The Making of Modern Europe, 1648–1780, London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, p. 190:

[5] Տե՛ս Хардт М., Негри А., указ. соч., с. 98-99:

[6] Anderson B., Imagined Communities Reflections on the Origin and Spread of Nationalism, Revised Edition, London and New York: VERSO, 1991, pp. 5-7.

[7] Տե՛ս Mazzini G., op. cit., p. 14:

տարրերը միասին կարող են սահմանել իրական ազգը: Իբրև ազգ նկատի ունենք քաղաքացիների ամբողջությունը, որ խոսում են նույն լեզվով և կապված են քաղաքացիական և քաղաքական հավասար իրավունքներով, զարգացման ու հասարակական բոլոր ուժերի գործունեության աստիճանական կատարելագործման ընդհանուր նպատակով: Իշխանության ակունքը ազգն է»[1]:

Եվրոպայում ազգային գաղափարաբանության վերելքին և ազգ-պետությունների զարգացմանը մեծապես նպաստեցին նապոլեոնյան վարչաքաղաքական, իրավական, ռազմական, ֆինանսա-տնտեսական, կրթական և այլ կառուցվածքային բարեփոխումները[2]: Այսպիսով, սկսվեց ազգային հիմքով պետությունների համախմբման գործընթաց. 1500 թ. Եվրոպայում կային շուրջ հինգ հարյուր անկախ քաղաքական միավորներ, իսկ արդեն 1900 թ.՝ շուրջ քսանհինգ[3]:

Վիեննայի կոնգրեսից հետո լուսավորականության քաղաքական և ընկերային կարգերի բարեփոխումների գաղափարները բյուրեղացան քաղաքական գաղափարաբանությունների՝ լիբերալիզմի, նացիոնալիզմի և սոցիալիզմի մեջ: Եթե լիբերալիզմը նշանավորում էր մարդու և քաղաքացու իրավունքներն ու անձնական ազատությունները, ապա նացիոնալիզմը՝ ազգի հավաքական իրավունքները և առանձնահատկությունները: Սոցիալիզմը ընդգծում էր սոցիալ-տնտեսական արդարության գաղափարը[4]: 19-րդ դարում Եվրոպայում լիբերալ-ազգային գաղափարաբանության դիրքերից էր հանդես գալիս նաև Մաձինին, ով համոզված էր, որ միայն ազգ-պետությունը կարող է հնարավոր դարձնել քաղաքացիական կրթությունը և իրական ժողովրդավարությունը: Նրա համար ազգը անհրաժեշտ քայլ էր դեպի մարդկության ընկերակցությունը, և քաղաքական միավոր էր ժողովրդավարական ընկերակցության մեջ: Նա պնդում էր, որ ժողովրդավարության և ազգերի ինքնորոշման իրավունքի տարածումը երկարաժամկետ հեռանկարում խաղաղություն կբերի, թեև անցումը հաճախ կարող է բռնի լինել:

Մաձինիի քաղաքական մտքի ազդեցությունն էր կրում նաև ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, ով Վերսալի խաղաղության պայմանագրին (1919 թ.) ընդառաջ լիբերալ-ինտերնացիոնալիզմը բարձրացրեց միջազգային քաղաքական դոկտրինի մակարդակի՝ առաջարկելով ստեղծել Ազգերի Լիգա[5]: Ըստ ամերիկացի նշանավոր սոցիոլոգ, իմաստասեր Ի. Ուոլերսթայնի՝ 1917 թվականը արդի աշխարհհամակարգի պատմության մեջ գաղափարաբանական առումով շրջադարձային էր: Այդ շրջադարձը նշանավորեցին մի կողմից՝ Վիլսոնի դոկտրինի հռչակումը, և մյուս կողմից՝ բոլշևիկյան հեղափոխությունը[6]: Վիլսոնի դոկտրինը հիմնված էր լիբերալ

---

[1] Mazzini G., op. cit., p. 50.

[2] Տե՛ս Grab A., Napoleon and the Transformation of Europe (European History in Perspective), New York and Basingstoke: Palgrave Macmillan, 2003, pp. 20-21, 209:

[3] Տե՛ս Tilly Ch. (ed.), The Formation of National States in Western Europe, Princeton, New Jersey: Princeton University Press, 1975, p. 15:

[4] Տե՛ս Hause S. and Maltby W., Western Civilization: A History of European Society, 2nd edition, Thomson Wadsworth, 2004, p. 465:

[5] Տե՛ս Mazzini G., op. cit., pp. 1-3:

[6] Տե՛ս Валлерстайн И., Анализ мировых систем и ситуация в современном мире. Пер. с англ. П. М. Кудюкина. Под ред. Б. Ю. Кагарлицкий — СПб.: Издательство «Университетская книга», 2001, с. 151-153: Բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ևս հայտարարում էին ազգերի ինքնորոշու-

(ազատական) գաղափարաբանության վրա և համընդհանրական բնույթ ուներ. նորարարությունը ազատական սկզբունքների կիրառման բարձրացումն էր ներազգային (ներպետական) անհատական մակարդակից մինչև միջազգային համակարգ: Այստեղ կենտրոնականը ինքնորոշման գաղափարն էր, որը անձի ազատության իրավունքից վերածվեց ազգերի ինքնորոշման իրավունքի:

Այսպիսով, Եվրոպայի ազգ-պետությունների զգալի մասը սկսեցին ձևավորվել արդեն 1648 թ. Վեստֆալյան պայմանագրերով ավարտուն տեսք ստացած տարածքային պետությունների ներսում: Բացարձակապետության ֆեոդալական հիմքերի քայքայումից հետո Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում առաջ եկավ ազգային ինքնության և հավատարմության նոր հարացույցը: Մյուս մասին բնորոշ էր «ուշացած ազգերի» երևույթը, երբ ազգ-պետությունների համախմբմանը նախորդում էր ազգային ինքնագիտակցության ձևավորումը:

Тигран Епремян, Национальное государство как новый социально-исторический феномен и субъект: формирование, - В статье рассматриваются особенности формирования национального государства как нового вида международной политической единицы и социально-исторического феномена, которая возникла в Европе в начале эпохи модерна. Статья сравнительно рассматривает и анализирует основные компоненты «национального государства»–«нация» и «государство». Таким образом, рассматриваются как социально-философские, так и геостратегические стимулы к процессу образования национальных государств в Европе.

Tigran Yepremyan, Nation State as a New Socio-Historical Phenomenon and an Entity: the Formation, - The article discusses the features of the formation of nation-state, a new kind of international political unit and a socio-historical phenomenon which emerged in Europe in the early modern times. The paper comparatively examines and analyzes the two basic components of “national-state” – the “nation” and the “state”. Thus, socio-philosophical as well as geo-strategic incentives of the European nation building process are taken into consideration.

\ **Տիգրան Եփրեմյան** – ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ:

մը պաշտպանելու մասին: Ազգերը կամ ժողովուրդները, ըստ մարքսիզմի տեսության, երկարաժամկետ դերակատարներ չէին. ենթադրվում էր, որ նրանք, ինչպես և պետությունները, ի վերջո վերանալու են: Սակայն կարճաժամկետ հեռանկարում ազգերը կամ ժողովուրդները իրողություններ էին, որոնք մարքսիստական ուժերը, ոչ միայն չէին կարող մերժել, այլև որոնց օգտագործումը մարտավարական առումով ձեռնտու էր: Բայց ի տարբերություն Վիլսոնի, որը պաշտպանում էր այդ իրավունքի իրականացման սահմանադրական ուղին, Լենինը հանդես էր գալիս հեղափոխության դիրքերից: